

3519

Ի. ՄՏԱԼԻՆ

ՄԵԾ ԲԵԿՄԱՆ ՏԱՐԻՆ

3K33

Մ- 55

ՊԵՏԼՈՒՍ — ԲԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1938

27 JUN 2005

14 NOV 2009

3K33
U-55

այս

Ի. ՍՏԱԼԻՆ

ՄԵԾ ԲԵԿՄԱՆ
ՏԱՐԻՆ

Հոկտեմբերի XII տարեդարձի տոթիվ

2570
307

ՄԵԾ ԲԵԿՄԱՆ ՏԱՐԻՆ

Հոկտեմբերի XII տարեդարձի տարիվ

467
39

И. СТАЛИН

ГОД ВЕЛИКОГО ПЕРЕЛОМА

Аргмиз—Издательство полит. литературы
Ереван, 1938

Անցած տարին սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում մեծ բեկման տարի չէր: Այդ բեկումն ընթացում էր ու շարունակում է ընթանալ քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի դեմ սոցիալիզմի վճռական հարձակման նշանի տակ: Այդ հարձակման բնորոշ առանձնահատկությունն այն է, վոր նա մեզ արդեն մի շարք վրճառողական հաջողություններ է տվել մեր ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման (ռեկոնստրուկցիայի) հիմնական բնադավառներում:

Մրանից հետևում է, վոր կուսակցությունը կարողացել է նպատակահարմար կերպով ոգտադործել նեպի առաջին ստադիաներում յեղած նահանջը, վորպեսզի հետո, նրա հետագա ստադիաներում, կազմակերպի բեկումն և հաջող հարձակման անցնի կապիտալիստական տարրերի դեմ:

Նեպը մտցնելիս լենինն ասում էր.

«Մենք այժմ նահանջում ենք, մի տեսակ հետ ենք նահանջում, բայց մենք այդ անում ենք, վորպեսզի սկզբում նահանջենք, իսկ հետո դու քաշենք ու ավելի ուժգին առաջ թռչենք: Միմիայն այս միակ պայմանով մենք հետ նահանջեցինք մեր տնտեսական նոր քաղաքականությունը կիրառելիս... վորպեսզի նահանջից հետո ամենահամառ հարձակում սկսենք դեպի առաջ» (հ. XXVII, էջ 361—362):

Անցած տարվա հանրադրումարներն անկասկածելի կերպով խոսում են այն մասին, վոր կուսակցությունն իր աշխատանքի մեջ հաջողությամբ իրադործում է լենինի այս վճռողական ցուցումը:

* * *

Յեթե վերցնենք անցած տարվա հանրադրումարները մեզ համար վճռողական նշանակություն ունեցող տնտեսական

չինարարութեան դժուր, ապա մեր հարձակման հաջողութեամբ մեր ճակատում, անցած տարւոյ ընթացքում անցած մեր նվաճումները կարելի կլինէր հանգեցնել յերեք հիմնական մոմէնտի:

I

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հազիւ թէ կարելի չէ կասկածել, վոր վերջին տարւոյ մեր շինարարութեան ամենակարեւոր փաստերէց մէկը, յետք վոր ամենակարեւոր փաստը, այն փաստն է, վոր մեզ հաջողակեց վնասական բեկում առաջ բերել աշխատանքի արտադրողականութեան բնագավառում: Այդ բեկումն արտահայտութեան գտալ սոցիալիստական շինարարութեան ճակատում բանւոր դասակարգի միլիոնավոր մասսաների ստեղծագործական նախաձեռնութեան ու աշխատանքային հզոր վերելքի ծախսելու մէջ: Այս է մեր առաջին ու հիմնական նվաճումն անցած տարում:

Մասսաների ստեղծագործական նախաձեռնութեան ու աշխատանքային վերելքի ծախսումը խթանում էր յերեք հիմնական գծերով. ա) մասսաների աշխատանքային նախաձեռնութեանն ու աշխատանքային ակտիւութեանը կաշկանդող բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարի գծով—ինքնաֆնադատութեան միջոցով. բ) գործալիքների ու սրբութեան աշխատանքային կարգապահութեանը կործանողների դեմ մղվող պայքարի գծով—սոցիալիստական մրցակցութեան միջոցով. վերջապես, գ) արտադրութեան մեջ ուտիլիտայի ու անշարժութեան դեմ մղվող պայքարի գծով—անընդհատ կազմակերպման միջոցով: Վերջինս հետևանք աշխատանքի ճակատում մենք ունենք մեծագույն նվաճում բանւոր դասակարգի միլիոնավոր մասսաների աշխատանքային խանդավառութեան ու աշխատանքային մրցակցութեան մեր անձայրածիր յերկրի բոլոր ծայրերում: Իսկ այս նվաճման նշանակութեանն իսկապես վոր անդնահատելի չէ, վորովհետև միլիոնավոր մասսաների աշխատանքային վերելքն ու աշխատանքային խանդավառութեանը միայն կարող է ապահովել աշխատանքի արտադրողականութեան այն

առաջընթաց անումը, առանց վորի աներևակայելի չէ սոցիալիզմի վերջնական հաղթութեանը կապիտալիզմի դեմ:

«Աշխատանքի արտադրողականութեանը,—ասում է Լենինը,—դա, վերջին հաշիւով, ամենակարեւորն է, ամենադժուարը նոր հասարակարգի հաղթութեան համար: Կապիտալիզմն ստեղծել է աշխատանքի մի արտադրողականութեան, վորպիսին տեսնւած չէր ճորտատիրութեան դրով: Կապիտալիզմը կարող է վերջնականապես հաղթել է վերջնականապես կհաղթի նրանով, վոր սոցիալիզմն ստեղծում է աշխատանքի նոր, շատ ավելի բարձր արտադրողականութեան» (Տ. XXIV, էջ 342):

Սրանից յետևելով՝ Լենինը գտնում է, վոր

«Մենք պետք է սողորվենք աշխատանքային այն խանդավառութեամբ, զեպի աշխատանքի մղող այն կամքով, համառութեամբ, վորից այժմ կախնւած է բանվորների ու գյուղացիների ամենատարաբարձր վերելքը, ժողովրդական տնտեսութեան վերելքը» (Տ. XXV, էջ 477):

Այս է այն խնդիրը, վոր Լենինը դրել է կուսակցութեան առաջ:

Անցած տարին ցույց տվեց, վոր կուսակցութեանը հաջողութեամբ է իրագործում այդ խնդիրը՝ վճռականորեն հաղթահարելով այդ ճանապարհի վրա գտնվող դժվարութեանները:

Այսպես է կուսակցութեան առաջին կարեւոր նվաճման բանն անցած տարում:

II

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Կուսակցութեան այս առաջին նվաճման հետ անխզելի կապակցութեան մէջ է գտնվում նրա յերկրորդ նվաճումը: Նա, կուսակցութեան այդ յերկրորդ նվաճումն, այն է, վոր անցած տարում մենք հիմնականում հասանք ծանր արդյունաբերութեան կապիտալ շինարարութեան համար կուտակում անելու պրոբլեմի բարեհաջող լուծմանը, արտադրութեան միջոցների արտադրութեան զարգացման արագացրած տեմպ վերցրինք ու մեր յերկրորդ մետաղե յերկրի վերածելու նախադրյալներ ստեղծեցինք: Այս է մեր յերկրորդ ու հիմնական նվաճումն անցած տարում:

Թեթև ինդուստրիայի պրոդեմն առանձին դժվարութիւններ չի ներկայացնում: Մենք արդէն այն լուծել ենք միջանի տարի սրանից առաջ: Ավելի դժվար ու ավելի կարեւոր է ծանր ինդուստրիայի պրոդեմը: Ավելի դժվար, վորովհետեւ նա պահանջում է հսկայական ներդրումներ, ընդվորում, ինչպէս արդյունաբերական տեսակետից հետամնաց յերկրներն պատմութիւնն է ցույց տալիս, ծանր արդյունաբերութիւնն առանց հսկայական յերկարաժամկետ փոխառութիւնների չի կառավարվում: Ավելի կարեւոր, վորովհետեւ առանց ծանր արդյունաբերութիւնի զարգացման՝ մենք վոչ մի արդյունաբերութիւն չենք կարող կառուցել, մենք վոչ մի ինդուստրացում չենք կարող կենսադնոթել: Իսկ քանի վոր մենք չենք ունեցել և չունենք վոչ յերկարաժամկետ փոխառութիւններ, վոչ փոքրիշատե յերկարաժամկետ վարկեր, ուստի պրոդեմի սրութիւնը մեզ համար ավելի քան ակնհայտ է դառնում: Հենց սրանից է, վոր յեշտում են բոլոր յերկրների կապիտալիստները, յերբ նրանք մերժում են մեզ փոխառութիւններ ու վարկեր տալ՝ կարծելով, թէ մենք մեր սեփական ուժերով կուտակման պրոդեմի տակից դուրս չենք դա՛, ծանր արդյունաբերութիւնի վերակառուցման հարցում կտապալվենք ու ստիպված կլինենք գնալ նրանց գլուխ խոնարհելու, ստրկանալու:

Իսկ այդ մասին մեզ ի՞նչ են ասում անցած տարվա հանրագումարները: Անցած տարվա հանրագումարների նշանակութիւնն այն է, վոր նրանք ջարդուփչուր են անում պարոնայք կապիտալիստների հաշիվները: Անցած տարին ցույց տվեց, վոր չնայած ԽՍՀՄ-ի ակնհայտ ու գաղտնի ֆինանսական բլոկադին, մենք կապիտալիստներին չսուրկացանք ու մեր սեփական ուժերով հաղողութիւնով լուծեցինք կուտակման պրոդեմը՝ ծանր ինդուստրիայի հիմքերը դնելով: Բանվոր դասակարգի նույնիսկ մոլեռանդ թշնամիներն այժմ չեն կարող ժխտել այս բանը: Իրոք վոր, յեթէ կապիտալ ներդրումները խոշոր արդյունաբերութիւնի մեջ անցյալ տարի կազմում էին 1.600 միլիոն ռուբլուց ավելի, ընդվորում դրանից մոտ 1300 միլիոն ծախսվել է ծանր արդյունաբերութիւնի վրա, իսկ կապիտալ ներդրումները խոշոր արդյունաբերութիւնի մեջ այս տարի 3400 միլիոն ռուբ-

լուց ավելի յեն կազմում, ընդվորում դրանից 2500 միլիոն ռուբլուց ավելի ծախսվելու յե ծանր արդյունաբերութիւնի վրա. յեթէ խոշոր արդյունաբերութիւնի համախառն արտադրանքն անցյալ տարի տվեց 23% աճում, ընդվորում ծանր արդյունաբերութիւնն այդ թիւում տվեց 30% աճում, իսկ խոշոր արդյունաբերութիւնի համախառն արտադրանքն ընթացիկ տարում պետք է տա 32% աճում, ընդվորում ծանր արդյունաբերութիւնն այդ թիւում պետք է տա 46% աճում,—այս մի՞թէ պարզ չէ, վոր ծանր արդյունաբերութիւնի կառուցման համար կուտակում անելու պրոդեմը մեզ համար անհաղթահարելի դժվարութիւններ չի ներկայացնում: Ի՞նչպէս կարելի յե կապիտալն այն մասին, վոր մենք արագացրած քայլով ենք առաջ գնում մեր ծանր ինդուստրիայի զարգացման դժով՝ անցնելով հին տեմպերից ու հետևում թողնելով մեր «վաղեմի» հետամնացութիւնը:

Բոլոր ասածից հետո կարելի՞ յե արդյոք զարմանալ, վոր հնգամյակի յենթադրութիւններն անցած տարում գերանցված դուրս յեկան, իսկ հնգամյակի ոպտիմալ վարիանստը, վորը բուրժուական գրչակներին մոտ «անհասանելի ֆանտաստիկա» յեր համարվում ու սարսափի յեր մատնում մեր աջ ոպորտունիստներին (Բուխարինի խումբը), իրականում հնգամյակի միլիմալ վարիանտի վերածվեց:

«Ռուսաստանի համար փրկութիւն է հանդիսանում,—ասում է Լենինը,—վոչ միայն լավ բերքը դուրացիական տնտեսութիւնի մեջ,—այդ դեռ քիչ է,—և վոչ միայն դուրացիութիւնն սպառման առարկանք մատակարարող թեթև արդյունաբերութիւնի լավ կացութիւնը,—այս եւ դեռ քիչ է,—մեզ անհրաժեշտ է նաեւ ծանր ինդուստրիա... Առանց ծանր արդյունաբերութիւնի փրկելու, առանց այն վերականգնելու, մենք վոչ մի արդյունաբերութիւն չենք կարողանա կառուցել, իսկ առանց նրան՝ մենք առհասարակ կկործանվենք վորպէս ինքնուրույն յերկիր... Մենք արդյունաբերութիւնը պետական նպաստների կարիք ունի: Թեթև մենք այդ նպաստները չգտնենք, ապա մենք վորպէս քաղաքակիրթ պետութիւն,—եւ յեա չեմ տուում՝ վորպէս սոցիալիստական պետութիւն—կորած ենք» (Հ. XXVII, էջ 349):

Ահա թէ վորքան կարուկ է ձևակերպում Լենինը կուտակման պրոդեմը և կուտակցութիւնի խնդիրը ծանր արդյունաբերութիւնի կառուցման գործում:

Անցած տարին ցույց տվեց, վոր կուսակցութիւնը հաջողութեամբ դուրս ե գալիս այդ խնդրի տակից, վճռականութեն հաղթահարելով այդ ճանապարհին բոլոր ու ամեն տեսակի դժգոհութիւնները:

Այս չի նշանակում, իհարկէ, վոր արդյունաբերութիւնն այլևս լուրջ դժգոհութիւններ չի ունենա: Ծանր արդյունաբերութեան կառուցման խնդիրը դեմ ե առնում վոչ միայն կուտակման պրոբլեմին: Նա դեմ ե առնում նաեւ կադրերի պրոբլեմին—ա) տասնյակ—հազարավոր խորհրդայնորեն տրամադրված տեխնիկներին ու մասնագետներին սոցիալիստական շինարարութեանը հաղորդակից անելու ե բ) բանվոր դասակարգի մարդկանցից նոր կարմէր տեխնիկներ ու կարմիր մասնագետներ պատրաստելու պրոբլեմին: Յետեւ կուտակման պրոբլեմը կարելի չե հիմնականում լուծված համարել, ապա կադրերի պրոբլեմը տակաւին իր լուծմանն ե սպասում: Իսկ կադրերի պրոբլեմն այժմ, արդյունաբերութեան տեխնիկական վերակառուցման պայմաններում, սոցիալիստական շինարարութեան վճռողական պրոբլեմն ե հանդիսանում:

«Գլխավորը,—ասում ե Լենինը,—վոր մեզ պակասում ե,—կուտուրականութիւնն ե, կառավարելու շնորհքը... Նեպո տնտեսագետ ու քաղաքականորեն լիովին ազահովում ե մեզ համար սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման հնարավորութիւնը: Բանը պրոլետարիատի ու նրա ախնգարդի կուլտուրական ուժերն են «միայն»» (Հ. XXVII, էջ 207):

Ակներեւ ե, վոր այստեղ խոսքն ամենից առաջ «կուլտուրական ուժերի» պրոբլեմի մասին ե, ընդհանրապես՝ տնտեսական շինարարութեան համար, առանձնապես՝ արդյունաբերութեան շինարարութեան ու կառավարման համար կադրեր ունենալու պրոբլեմի մասին:

Բայց սրանից հետեւում ե, վոր, չնայած ամենալուրջ նվաճումներին կուտակման բնագավառում, վորոնք ելական նշանակութիւն ունեն ծանր արդյունաբերութեան համար, ծանր արդյունաբերութեան կառուցման պրոբլեմը չի կարելի լիովին լուծված համարել, քանի դեռ լուծված չի լինի կադրերի պրոբլեմը:

Այստեղից՝ կուսակցութեան խնդիրը—ընդհուպ ձեռնառնել լինել կադրերի պրոբլեմին ե ինչպես ել լինի՝ տիրաւոր այս ամրոցին:

Այսպես ե կուսակցութեան յերկրորդ նվաճման բանն անցած տարվա ընթացքում:

III

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Վերջապես, անցած տարվա ընթացքում կուսակցութեան ունեցած յերրորդ նվաճման մասին, վորն որդանապես կապված ե առաջին յերկու նվաճումների հետ: Խոսքը վերաբերում ե մեր հողագործութեան զարգացման մեջ տեղի ունեցած արմատական բեկմանը մանր ու հետամնաց անհատական տնտեսութիւնից դեպի խոշոր ու առաջավոր կոլեկտիվ հողագործութիւնը, դեպի հողի միատեղ մշակումը, դեպի մեքենատրակտորային կայանները, դեպի արտեյներն ու կոլտնտեսութիւնները, վորոնք հենվում են նոր տեխնիկայի վրա, վերջապես դեպի խորհանտեսութիւն—գիղանտները, վորոնք զինված են հարյուրավոր տրակտորներով ու կոմբայներով: Կուսակցութեան նվաճումն այստեղ այն ե, վոր մեզ հաջողվեց մի ամբողջ շարք շրջաններում գյուղացիութեան հիմնական մասսաները դարձնել հին, կապիտալիստական զարգացման ճանապարհից, վորից շահում են միայն մի բոլոր հարուստ կապիտալիստներ, իսկ գյուղացիների հսկայական մեծամասնութիւնն ստիպված ե քարշտալ իր գոյութիւնն աղքատութեան մեջ,—դեպի զարգացման նոր, սոցիալիստական ուղին, վորն արտամղում ե հարուստ կապիտալիստներին, իսկ միջակներին ու չքավորութեանը վերադիւնում ե նոր ձեռով, զինում ե նոր գործիքներով, զինում ե տրակտորներով ու գյուղատնտեսական մեքենաներով, վորպեսզի նրանց հնարավորութիւն տա թշվառութիւնից ու կուլակային ստրկացումից դուրս գալու հողի ընկերական, կոլեկտիվ մշակութեան լայն ուղին: Կուսակցութեան նվաճումն այն ե, վոր մեզ հաջողվեց այդ արմատական բեկումը կազմակերպել բուն իսկ գյուղացիու-

թյան ընդերքում և մեր հետեւից տանել չբախտութեան ու միջակներէ լայն մասսաները, չնայած աներեւակայելի դժ-վարութիւններին, չնայած բոլոր ու ամեն տեսակի մուշ ուժերի կատաղի հակադրութեան՝ սկսած կուլակներէց ու տերտերներէց մինչև ֆիլիստերներն ու աջ ոպորտու-նիստները:

Ահա մի քանի թվեր: 1928 թ. խորհրդակցութեաններէ ցանքի տարածութիւնը կազմում էր 1425 հազար հեկտար՝ հատիկայինների 6 միլիոն ցենտներէց ալելի (36 միլիոն փթից ալելի) ապրանքային արտադրանքով, իսկ կոլտնտե-սութիւնների ցանքի տարածութիւնը կազմում էր 1390 հազար հեկտար՝ հատիկայինների մոտ 31½ միլիոն ցենտներ (20 միլիոն փթից ալելի) ապրանքային արտադրանքով: 1929 թ. խորհրդակցութեանների ցանքի տարածութիւնը կազմում էր 1816 հազար հեկտար՝ հատիկայինների մոտ 8 միլիոն ցենտներ (մոտ 47 միլիոն փութ) ապրանքային առ-տադրանքով, իսկ կոլտնտեսութիւնների ցանքի տարածու-թիւնը կազմում էր 4262 հազար հեկտար՝ հատիկայինների մոտ 13 միլիոն ցենտներ (մոտ 78 միլիոն փութ) ապրան-քային արտադրանքով: Յեկող 1930 թվականին խորհրդակ-սութիւնների ցանքի տարածութիւնն ըստ վերահսկիչ թվերի պետք է կազմի 3280 հազար հեկտար՝ հատիկային-ների 18 միլիոն ցենտներ (մոտ 110 միլիոն փութ) ապրան-քային արտադրանքով, իսկ կոլտնտեսութիւնների ցանքի տարածութիւնը պետք է կազմի 15 միլիոն հեկտար՝ հատի-կայինների մոտ 49 միլիոն ցենտներ (մոտ 300 միլիոն փութ) ապրանքային արտադրանքով: Այլ կերպ ասած՝ յե-կող 1930 թվին հատիկայինների ապրանքային արտադրանքը խորհրդակցութեաններում ու կոլտնտեսութիւններում պետք է կազմի ալելի քան 400 միլիոն փութ, այսինքն՝ ամբողջ գյուղատնտեսութեան հատիկայինների ապրանքա-յին արտադրանքի ալելի քան 50%-ը (արտադրողական չըջանառութիւն):

Հարկաւոր է ընդունել, վոր զարգացման այսպիսի բուռն տեմպեր չգիտե նույնիսկ մեր սոցիալիզացիայի յեն-թարկւած խոշոր արդիւնաբերութիւնը, վորի զարգացման տեմպերն աչքի յեն ընկնում առհասարակ մեծ թափով:

Մի՞թե պարզ չէ, վոր մեր յերիտասարդ խոշոր սոցիա-լիստական հողագործութիւնը (կոլտնտեսայինն ու խորհ-տնտեսայինը) մեծ ապագա ունի, վոր նա ամսման հրաշքեր է յերեւան բերելու:

Այս չտեսնւած հաջողութիւնը կոլտնտեսային շինա-րարութեան բնագավառում բացատրւում է մի ամբողջ շարք պատճառներով, վորոնցից պետք էր նշել դոնե հետեւյալ-ները:

Այդ բացատրւում է ամենից առաջ նրանով, վոր կու-սակցութիւնը կիրառում էր մասսաների դաստիարակու-թյան լենինյան քաղաքականութիւն, կոոպերատիվ հասա-րակայնութիւն արմատաւորելու միջոցով գյուղացիական մասսաներին հետեւողականորեն մոտեցնելով կոլտնտեսու-թիւններին: Այդ բացատրւում է նրանով, վոր կուսակցու-թիւնը հաջող պայքար էր մղում ինչպես այն մարդկանց դեմ, ովքեր փորձում էին շարժումից առաջ անցնել ու դեկրետադրել կոլտնտեսութիւնների զարգացումը («ձախ» ֆրազաբանները), այնպես էլ նրանց դեմ, ովքեր փորձում էին կուսակցութիւնը դեպի հետ քաշել ու շարժման պո-չում մնալ (աջ քայլադէպները): Առանց այսպիսի քաղա-քականութեան՝ կուսակցութիւնը չպիտի կարողանար կոլ-տնտեսային շարժումը վերածել իրենց իսկ գյուղացիների իսկապես մասսայական շարժմանը:

Յերբ Պետրոգրադի պրոլետարիատն ու Պետրոգրադի կայաքերի զինվորները վերցնում էին իշխանութիւնը, — ասում է լենինը, — նրանք հիանալի կերպով դիտեին, վոր գյուղում շինարարութիւն կատարելու գործում մեծ դժվարութիւններ են հանդիպելու, վոր այստեղ հաբկա-վոր է ալելի աստիճանաբար տուջ դնալ, վոր այստեղ դեկրետներով, որենքներով հողի հանրային մշակում մտցնել փորձել մեծագույն ան-հեթեթութիւն կլինի, վոր այս բանին կարող էին համաձայնել չնչին թիվ կազմող զիտակիցները, իսկ գյուղացիների հսկայական մեծամաս-նութիւնն այս խնդիրը չէր դնում: Յեւ այս պատճառով մենք սահմա-նափակում էինք նրանով, ինչ բացարձակապես անհրաժեշտ է հեղափո-խութեան զարգացման շահերի տեսակետից. վոչ մի դեպքում մասսաների զարգացումից առաջ չանցնել, այլ սպասել, մինչև վոր այդ մասսաների սեփական փորձից, նրանց սեփական պայքարից կանի դեպի առաջ ըն-թացող շարժումը» (հ. XXIII, էջ 252):

Յեթե կուսակցութիւնը խոշորագույն հաղթութիւն տարաւ կոլտնտեսային շինարարութեան ճակատում, ապա

այդ աշխատանքում, վոր նա ճշգրտորեն իրագործում էր
լենինի այս տակտիկական ցուցումը:

Յերկրորդ, գյուղատնտեսական շինարարության գործում այդ չտեսնված հաջողությունը բացատրվում է նրանով, վոր Սորհրդային իշխանությունը ճիշտ հաշվի առավ գյուղացիության՝ նոր ինվենտարի, նոր տեխնիկայի աճող կարիքը, նա ճիշտ հաշվի առավ գյուղացիության դրությունն անկանխելիություններ հողի մշակության հին ձևերի ժամանակ է, այդ բոլորը հաշվի առնելով՝ ժամանակին նրան ոգնություն կազմակերպեց վարձակետերի, տրակտորաչարանների, մեքենա-տրակտորային կայանների ձևով, հողի հանրային մշակություն կազմակերպելու ձևով, կոլտնտեսություններ արմատավորելու ձևով, վերջապես, խորհրդատեսությունների ուժերով գյուղացիական տնտեսությունն ամենակողմանի ոգնություն կազմակերպելու ձևով: Մարդկության պատմության մեջ առաջին անգամ աշխարհ յեկավ մի իշխանություն,—խորհուրդներ իշխանություններ,—վորը գործով ապացուցեց գյուղացիության աշխատավոր մասսաներին սխտեմատիկ ու յերկարատե արտադրական ոգնություն ցույց տալու իր պատրաստակամությունն ու իր ընդունակությունը: Միթե պարզ չե՞, վոր գյուղացիության աշխատավոր մասսաները, վորոնք տառապում են ինվենտարի վաղմի կարիքից, չեյին կարող չկառչել այդ ոգնությունը՝ րոնելով կոլտնտեսային շարժման ուղին: Յեվ մի՞թե կարելի չե վարձանալ, վոր այսուհետև բանվորների հին լոգունը՝ «յերեններս դեպի գյուղ»—թերևս լրացվի գյուղացի-կոլտնտեսականների նոր լոգունով՝ «յերեններս դեպի քաղաք»:

Եւ, այդ չտեսնված հաջողությունը կոլտնտեսային շինարարության գործում բացատրվում է, վերջապես, նրանով, վոր այդ գործն իրենց ձեռքն են առել մեր յերկրի առաջավոր բանվորները: Յես նկատի ունեմ բանվորական բրիգադները, վորոնք տասնյակներով ու հարյուրներով ցրված են մեր յերկրի հիմնական շրջաններում: Պետք է ընդունել, վոր կոլտնտեսային շարժման բոլոր գոյություն ունեցող ու հնարավոր պրոպագանդիստներին լավագույն պրոպագանդիստները գյուղացիական մասսաների մեջ բանվոր

պրոպագանդիստներն են: Եւ վարձանալի լինչ կարող է լինել նրանում, վոր բանվորներին հաջողվեց համոզել գյուղացիներին, վոր խոշոր կոլեկտիվ տնտեսությունն առավելություն ունի անհատական մանր տնտեսության հանդեպ, մանավանդ վոր գոյություն ունեցող կոլտնտեսություններն ու խորհրդատեսություններն այդ առավելությունը ցուցադրող ակնբախ որինակ են:

Ահա թե ինչ հողի վրա աճեց մեր նվաճումը կոլտնտեսային շինարարության բնագավառում,—մի նվաճում, վորն, ըստիս, վերջին տարիների բոլոր նվաճումներից ամենակարեւոր ու վճռողական նվաճումն է:

Սորտակվեցին և հողմացրիվ յեղան «գիտություն» առարկությունները 50—100 հազ. հեկտարանոց հատիկային խոշոր գործարաններ կազմակերպելու հնարավորության ու նպատակահարմարության դեմ: Պրակտիկան հերքեց «գիտություն» առարկությունները՝ մի ավելորդ անգամ ցույց տալով, վոր վո՛չ միայն պրակտիկան պետք է դաս առնի «գիտությունից», այլև «գիտությունն» եւ չեր խանդարի դաս առնել պրակտիկայից: Կապիտալիստական յերկրներում չեն պատկաստվում խոշոր հատիկային գործարան-գիգանտները: Բայց մեր յերկիրը կապիտալիստական յերկիր չէ: Չի կարելի մոռանալ այս «փոքրիկ» տարբերությունը: Այնտեղ, կապիտալիստների մոտ, չի կարելի խոշոր հատիկային գործարան կազմակերպել, առանց մի ամբողջ շարք հողամասեր գնելու կամ առանց բացարձակ հողային ունեւա վճարելու, վորը չի կարող չժանրարեռնել արտադրությունը հեկտարական ծախսերով, վորովհետեւ այնտեղ գոյություն ունի հողի մասնավոր սեփականություն: Մեզանում, ընդհակառակը, գոյություն չունի վո՛չ բացարձակ հողային ունեւա, վո՛չ եւ հողամասերի առուծախ, վորը չի կարող նպատակավոր սլայմաններ չստեղծել խոշոր հատիկային տնտեսության դարդացման համար, վորովհետեւ մեզանում հողի մասնավոր սեփականություն չկա: Այնտեղ, կապիտալիստների մոտ, խոշոր հատիկային տնտեսություններն առավելագույն շահույթ ստանալու կամ, համենայն դեպս, այնպիսի շահույթ ստանալու նպատակ ունեն, վորը համապատասխանում է շահույթի այսպես կոչված միջին նոր-

մային, առանց վորի, առհասարակ ասած, կապիտալը չա-
հադրգություն չունի խրվելու հատիկային տնտեսություն
կազմակերպելու գործի մեջ: Մեզանում, ընդհակառակը,
հատիկային խոշոր տնտեսությունները, վորոնք միաժամա-
նակ պետական տնտեսություններ են, իրենց զարգացման
համար վո՛չ մաքսիմում շահույթի, վո՛չ շահույթի միջին
նորմայի կարիք չունեն, այլ կարող են սահմանափակվել
նվազագույն շահույթով, իսկ յերբեմն ել յույս յեն գնում
նաև առանց վորեն շահույթի, վոր դարձյալ նպաստավոր
պայմաններ և ստեղծում հատիկային խոշոր տնտեսության
զարգացման համար: Վերջապես, կապիտալիզմի պայմաննե-
րում հատիկային խոշոր տնտեսությունների համար գոյու-
թյուն չունեն վո՛չ հատուկ արտոնյալ վարկեր, վո՛չ հա-
տուկ արտոնյալ հարկեր, այնինչ խորհրդային կարգերում,
վորոնց նպատակն է աջակցել սոցիալիստական սեկտորին,
այգլիսի արտոնություններ գոյություն ունեն և գոյու-
թյուն կունենան: Այս ամենի մասին հարգարժան «գիտու-
թյունը» մոռացել է:

Խորտակվեցին և հոգմացրիվ յեղան աջ ոպորտունիստ-
ների (Բուխարինի խումբը) պնդումներն այն մասին, թե՛
ա) գյուղացիները կոլտնտեսություն չեն մտնի, թե՛ բ) կոլ-
տնտեսությունների զարգացման ուժեղացրած տեմպը կարող
է առաջացնել յոկ մասսայական դժգոհություն ու գյուղա-
ցիության ապագողում (размычку) բանվոր դասակարգի
հետ, թե՛ գ) գյուղի սոցիալիստական զարգացման «գլխա-
վոր ճանապարհը» վո՛չ քե կոլտնտեսություններն են, ալլ
կոոպերացիան, թե՛ դ) կոլտնտեսությունների զարգացումը
և գյուղի կապիտալիստական տարրերի վրա հարձակվելը
կարող է յերկիրն առանց հացի թողնել: Այս ամենը խոր-
տակվեց և հոգմացրիվ յեղավ, վորպես հին բուրժուական-
լիբերալ հնոտի:

Նախ՝ գյուղացիները մտան կոլտնտեսությունները,
մտան ամբողջ գյուղերով, գալառակներով, չըջաններով:

Յերկրորդ՝ մասսայական կոլտնտեսային շարժումը չի
թուլացնում, այլ ամբացնում է գոգումը՝ նրան նոր, ար-
տադրական բազա տալով: Այժմ մինչև անգամ կույրերը
տեսնում են, վոր գյուղացիության հիմնական մասսաները

յեթե վորեն լուրջ դժգոհություն ել ունեն, ապա այն վի-
րաբերում է Խորհրդային իշխանության վո՛չ թե կոլտնտե-
սային քաղաքականությանը, այլ այն բանին, վոր գյուղա-
ցիներին մեքենաներ ու տրակտորներ մատակարարելու գոր-
ծում Խորհրդային իշխանությունը չի կարողանում հասնել
կոլտնտեսային շարժման աճման հետևից:

Յերրորդ՝ գյուղի սոցիալիստական զարգացման «գլխա-
վոր ճանապարհը» վերաբերյալ վեճը սխոլաստիկ վեճ է,
վորն արժանի չէ Այսենվալդի ու Սլեպկովի տիպի յերիտա-
սարդ մանր-բուրժուական լիբերալներին: Պարզ է, վոր քա-
նի դեռ մասսայական կոլտնտեսային շարժում չկար, «գլխ-
ավոր ճանապարհ» հանդիսանում էյին կոոպերացիայի
ստորին ձևերը, մատակարարող ու վաճառահանող կոոպե-
րացիան, իսկ յերբ հրապարակ իջավ կոոպերացիայի բարձ-
րագույն ձևը, նրա կոլտնտեսային ձևը, վերջինս դարձավ
զարգացման «գլխավոր ճանապարհը»: Առանց չակերտների
ասած՝ գյուղի սոցիալիստական զարգացման գլխավոր ճա-
նապարհը կազմում է Լենինի կոոպերատիվ պլանը, վորն
ընդգրկում է գյուղատնտեսական կոոպերացիայի բոլոր ձե-
վերը, ստորիններից (մատակարարող-վաճառահանող) մին-
չև բարձրագույնները (արտադրական-կոլտնտեսային): Կոլ-
տնտեսությունները հակադրել կոոպերացիային—նշանակում
է ծանակել լենինիզմը և ստորազրույթյամբ հաստատել իր
սեփական տգիտությունը:

Չորրորդ, այժմ մինչև անգամ կույրերը տեսնում են,
վոր առանց գյուղի կապիտալիստական տարրերի վրա հար-
ձակվելու և առանց կոլտնտեսային ու խորհտնտեսային
շարժման զարգացման՝ մենք այժմ չենք ունենա վո՛չ այն
մեծողական հաջողությունները հացամթերումների գոր-
ծում, վոր ձեռք ենք բերել ընթացիկ տարում, վո՛չ ել հա-
ցի այն տասնյակ-միլիոնավոր անձեռնմխելի պաշարները,
վորոնք արդեն կուտակվել են պետության ձեռքում: Դեռ
ավելին. վստահությամբ կարելի չէ ասել, վոր կոլտնտեսա-
յին-խորհտնտեսային շարժման աճման շնորհիվ մենք վերջ-
նականապես դուրս ենք գալիս կամ արդեն դուրս ենք յեկել
հացի ճգնաժամից: Յեվ յեթե կոլտնտեսությունների ու
խորհտնտեսությունների զարգացումն ընթանա ուժեղաց-

րած տեմպով, ապա հիմքեր չկան տարակուսելու, վոր մեր յերկիրն ընդամենը մի յերեք տարուց հետո կդառնա աշխարհիս ամենահացառատ յերկրներից մեկը, յեթե վոչ ամենահացառատ յերկիրը:

Վո՞րն է նորը ներկա կոլտնտեսային շարժման մեջ: Նորն ու վճռողականն այժմյան կոլտնտեսային շարժման մեջ այն է, վոր գյուղացիները կոլտնտեսություններն են մտնում վո՛չ թե առանձին խմբերով, ինչպես այդ տեղի յեր ունենում առաջ, այլ ամբողջ գյուղերով, գալառակներով, շրջաններով, մինչև իսկ գալառներով: Իսկ ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է այն, վոր կոլտնտեսություններն մեջ է մտել միջակը: Այս է գյուղատնտեսության զարգացման մեջ կատարված այն արժատական բեկման հիմքը, վորը կազմում է խորհրդային իշխանության կարեւորագույն նվաճումն անցած տարվա ընթացքում:

Խորտակվում է ու ջարդուփչուր է լինում արոցկիզմի մենչեիկյան «կոնցեպցիան» այն մասին, թե սոցիալիստական շինարարության գործում բանվոր դասակարգն անընդունակ է գյուղացիության հիմնական մասսաներն իր հետեից տանելու: Այժմ մինչև անգամ կույրերը տեսնում են, վոր միջակը կոլտնտեսությունների կողմն է դարձել: Այժմ բոլորի համար պարզ է, վոր արդյունաբերության ու գյուղատնտեսության հնգամյակը սոցիալիստական հասարակության կառուցման հնգամյակն է, վոր այն մարդիկ, վորոնք չեն հավատում մեր յերկրում սոցիալիզմ՝ կառուցելու հնարավորությանը, մեր հնգամյակը վողջունելու իրավունք չունեն:

Խորտակվում է և վոչի յե դառնում ԽՍՀՄ-ում կապիտալիզմը վերականգնելու մասին յերագող բոլոր յերկրների կապիտալիստների վերջին հույսը, — «մասնավոր սեփականության սրբազան սկզբունքը»: Գյուղացիները, վոր նրանց կողմից զխավում են վորպես մի նյութ, վորը աղբում է հողը կապիտալիզմի համար, մասսայորեն լքում են «մասնավոր սեփականության» գովված դրոշը ու փոխադրվում են կոլեկտիվիզմի ուժերի վրա, սոցիալիզմի ուժերի վրա: Խորտակվում է կապիտալիզմը վերականգնելու վերջին հույսը:

Ի միջի այլոց սրանով էլ բացատրվում են մեր յերկրի կապիտալիստական տարրերի կատաղի փորձերը՝ հարձակվող սոցիալիզմի դեմ՝ բարձրացնելու հին աշխարհի բոլոր ուժերը, — փորձեր, վորոնք, հանդեցնում են դասակարգերի կռիվ սրմանը: Կապիտալը չի ուզում սոցիալիզմի մեջ «նե-րածել»:

Սրանով էլ պետք է բացատրել այն շարաններ, վորոնցը բուլչեիզմի դեմ, վոր վերջին ժամանակներս բարձրացրել են կապիտալի կապովի շները, այդ ամեն տեսակ Ստրուվեներն ու Գեսսենները, Միլյուկովներն ու Կերենսկիները, Դաներն ու Աբրամովիչները: Կատակ հո չի՞, չբռնում է կապիտալիզմի վերականգնման վերջին հույսը:

Ել ինչի՞ մասին կարող են վկայել դասակարգային թշնամիների այդ կատաղի զազագուժը և կապիտալի բակեյներն այդ մոլեգին վրոնոցը, յեթե վոչ այն մասին, վոր կուսակցությունն իսկապես վճռողական հաղթություն է տարել սոցիալիստական շինարարության ամենագովարին ճակատում:

567

«Միայն այն դեպքում, — ասում է Լենինը, — յեթե հաջողվի գործով ցույց տալ գյուղացիներին հողի հանրային, կոլեկտիվ, բնկերային, արտելային մշակման առավելությունները, միայն յեթե հաջողվի ուժեղ գյուղացուն բնկերային, արտելային տնտեսության ողնությամբ, — իշխանությունն իր ձեռքին բռնած բանվոր դասակարգը միայն այդ ժամանակ իսկապես կառուցուցի գյուղացուն իր իրավացիությանը, իսկապես հաստատուն կերպով ու իսկականորեն իր կողմը կզրավի բազմամիլիոն գյուղացիական մասսան» (Հ. XXIV, էջ 579):

Լենինն այսպես է դնում բազմամիլիոն գյուղացիությունը բանվոր դասակարգի կողմը դրավելու ուղիների հարցը, գյուղացիությունը կոլտնտեսային շինարարության ուժերի վրա փոխադրելու հարցը:

Անցած տարին ցույց տվեց, վոր կուսակցությունը հաջողությամբ դուրս է բերում այդ խնդիրը՝ վճռակա-նորեն հաղթահարելով բոլոր ու ամեն տեսակի դժվարություններն այդ ճանապարհին:

«Միջակ գյուղացիությունը, — ասում է Լենինը, — կոմունիստական հասարակության մեջ միայն այն ժամանակ մեր կողմը կլինի, յերբ

մենք թեթևացնենք ու բարեկամենք նրա կյանքի տնտեսական պայմանները: Յեթե մենք կարողանայինք վաղը տալ 100 հազար առաջնակարգ տրակտոր, դրանք ապահովեյինք լենդինով, դրանք ապահովեյինք մեքենավարներով (զուր հիանալի գիտեք, վոր առաջիմ սա Փանոտզիա յե), ապա միջակ դյուղացին կասեր. «Յես կոմունիայի կողմն եմ» (այսինքն՝ կոմունիզմի կողմը): Բայց այդ անելու համար հարկավոր ե նախ հազթեղ միջազգային բուրժուազիային, հարկավոր ե հարկադրել նրան, վոր տա մեզ այդ տրակտորները, կամ թե՛ չե՛ մեր արտադրողականությունը այնքան պետք ե բարձրացնել, վորպեսզի մենք ինքներս կարողանանք դրանք հայթայթել: Միայն այս կերպ ճիշտ դրված կլինի այդ հարցը» (հ. XXIV, էջ 170):

Լենինն այսպես ե դնում միջակի տեխնիկական վերադիման ուղիներին հարցը, նրան կոմունիզմի կողմը դրավելու ուղիներին հարցը:

Անցած տարին ցույց տվեց, վոր կուսակցությունը հաջողությամբ գլուխ ե բերում նաե այս խնդիրը: Հայանի յե, վոր վերահաս 1930 թվի դարնանը մենք դաշտերում կունենանք 60 հազ. ավելի տրակտոր, դրանից մի տարի հետո—100 հազ. ավելի տրակտոր, իսկ ելի յերկու տարի անց 250 հազ. ավելի տրակտոր: Այն, ինչ միջանի տարի առաջ «Փանոտզիա» յեր համարվում, այժմ մենք հնարավորություն ունենք վրադրով իրականություն դարձնելու:

Ահա թե վորտեղ ե այն բանի պատճառը, վոր միջակը դարձել ե «կոմունիայի» կողմը:

Այսպես ե կուսակցության յերրորդ նվաճման բանը:

Սրանք են կուսակցության հիմնական նվաճումներն անցած տարվա ընթացքում:

ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Մենք ամբողջ թափով դնում ենք ինդուստրացման ճանապարհով—դեպի սոցիալիզմ, մեր հետևում թողնելով մեր դարավոր, «ռուսեթյան» («рассейская») հետամնացությունը: Մենք դառնում ենք մետաղի յերկիր, ավտոմոբիլացման յերկիր, տրակտորացման յերկիր: Յեվ յերբ ԽՍՀՄ-ն ավտոմոբիլ նստեցնենք, իսկ մուժիկին՝ տրակտոր,—թող

վորձեն հասնել մեզ արդո կապիտալիստները, վորոնք դուռը անում են իրենց «քաղաքակրթությամբ»: Մենք դեռ կտեսնենք, թե այն ժամանակ յերկրներից վորոնք կարելի յե «դասել» հետամնացների կարգը ե վորոնք՝ առաջավորների կարգը:

«Прася» № 259,
7 հոյեմբերի 1929 թ.



Հայերեն թարգմանությունը թարգմտեց Բ. Կարսիրոսյան
Տեխն. թմբ. Ս. Խաչատրյան
Սրբազրիչ Վ. Ջիզեջյան
Կանաչու ռեբազրիչ Լ. Արուսյան

Դրավիճակի լրացում Կ—3331, հրատ. № 621
Պատվեր № 164, տիրած 5.000
Հանձնվել է տրամադրության 21/XI 1938 թ.
Ստորագրվել է տպագրելու 8/XII 1938 թ.
Գինը 20 է., կազմը 30 է.:

Չեհրա—Քաղաքական գրականության
հրատարակչության տպարան,
Ֆերեան, Ալավերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0179073

4466 20 4

И. СТАЛИН

ГОД ВЕЛИКОГО ПЕРЕЛОМА

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1938